Արձանագրություն N 3

ԱԲԿ-ԷԱ ԱՊՁԲ-19/02 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով Ռ.Հարությունյանի անվան Աբովյանի բժշական կենտրոն ՓԲԸ կարիքների համար Վառելիքի/բենզին պրեմիում/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Աբովյան

07.12.2018թ..
ժ.15:00

Նիստին մասնակցում են՝ գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մարինե Բաբայանը, անդամներ՝, Աննա Գրիգորյանը, Շաղիկ Նազլուխանյանը և գնահատող հանձնաժողովի քարտուղար Անահիտ Արսենյանը:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թվ.թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի2-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:

1. **<u>Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>**

Մարինե Բաբայան

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Արսենյանը համաձայն ՀՀ կառավարության 14 մայիսի 2017թ.թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 19-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.10 կետի պահանջներին կատարել է հարցում ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտե, առաջին տեղ զբաղեցնող մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվողեկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ: Կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ սահմանված ժամկետում տրամադրել է եզրակացություն:

2. **Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հանապատասխանության գնահատման մասին**

2.1 Հիմք ընդունելով Կոմիտեի եզրակացությամբ տրամադրված տեղեկատվությունը,Կարգի 59-րդ կետի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաձողովի անդամների տրված գնահատման թերթիկները/ կցվում են/ գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.2 Առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **<u>Ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին</u>**

Մարինե Բաբայան

3.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ֆլեշ ՍՊԸ, Սույն կետում նշված չափաբաժինների համար Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին</u>

Մարինե Բաբայան

<<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ ԱԲԿ-ԷԱ ԱՊՁԲ-19/02 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

նախագահ՝ Մարինե Բաբայան

անդամներ՝ Աննա Գրիգորյանը

անդամներ՝ Շաղիկ Նազլուխանյան

քարտուղար՝ Անահիտ Արսենյան